ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

___ « _____ » 2026թ. **N __-Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 85-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի ապրիլի 12-ի «Երևան քաղաքի խորհրդանիշերի մասին» N 85-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԶԻՆԱՆՇԱՆԻ, ԴՐՈՇԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՐՀՆԵՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

2) Որոշման նախաբանում ««Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածին համապատասխան՝» բառերը փոխարինել «Հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը՝» բառերով.

3) Որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1. Սահմանել՝

1) Երևան քաղաքի զինանշանի նկարագրությունը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Երևան քաղաքի դրոշի նկարագրությունը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Երևան քաղաքի օրհներգը՝ համաձայն N 3 հավելվածի:».

4) Որոշման N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի.

5) Որոշման N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունիսի 1-ից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված N 1
Երևան քաղաքի ավագանու
2026 թվականի ապրիլի ----ի
N------ Ն որոշման

«Հավելված N 1
Երևան քաղաքի ավագանու
12.04.2010թ. N 85-Ն որոշման

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԶԻՆԱՆՇԱՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Երևան քաղաքի զինանշանն ունի հետևյալ նկարագիրը.

Ոսկեգույն (գունային կոդ՝ HEX:#DCBB7F; RGB-220/187/127) ֆոնին հայերեն սպիտակ (գունային կոդ՝ #FFFFFF; RGB-255/255/255) մեծատառերով մակագրված «ԵՐԵՎԱՆ» պատվանդանին կանգնած, գլուխը հետ շրջած, իշխանության խորհրդանիշ գավազանը բռնած առյուծն է: Նրա գլխավերևում թագն է, մեջտեղից բարձրացող կենաց ծառի խորհրդանիշ վարսանդով:

Առյուծի կրծքին, հավերժության նշանի վրա Արարատ լեռան պատկերն է:

Ողջ պատկերը երիզված է ուղղանկյունաձև վահանակով:

Գործածված են ոսկեգույն և սպիտակ գույները:»:

Հավելված N 2
Երևան քաղաքի ավագանու
2026 թվականի ապրիլի ----ի
N------ Ն որոշման

«Հավելված N 2
Երևան քաղաքի ավագանու
12.04.2010 թ. N 85-Ն որոշման

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԴՐՈՇԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Երևան քաղաքի դրոշն ունի հետևյալ նկարագիրը.

Դրոշի ուղղանկյուն խաղապատկերն ընտրված է սպիտակ՝ (գունային կոդ՝ #FFFFFF; RGB-255/255/255) որպես մաքրության, պարզության, անաղարտության միացյալ խորհրդանիշ: Կենտրոնում Երևան քաղաքի զինանշանն է՝ շրջապատված 12 ոսկեգույն (գունային կոդ՝ #DCBB7F; RGB-220/187/127) եռանկյունիներով, որոնք խորհրդանշում են Հայաստանի 12 մայրաքաղաքները: Զինանշանի երանգը ոսկեգույն է:

Դրոշի լայնության և երկարության չափերի հարաբերությունն է՝ 1:2-ի: Սույն հավելվածով նախատեսված Երևան քաղաքի դրոշի լայնության և երկարության հարաբերության չափերի պահպանմամբ կարող է օգտագործվել նաև փոքր կամ մեծ չափի դրոշ:»:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 85-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, ընթացիկ իրավիճակը, առկա խնդիրները և առաջարկվող լուծումները.

Երևան քաղաքի զինանշանի և դրոշի նկարագրությունը սահմանված է Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի ապրիլի 12-ի N85-Ն որոշմամբ: Գործող կարգավորումների համաձայն՝ Երևան քաղաքի զինանշանն ունի հետևյալ նկարագիրը. Կապույտ ֆոնին հայերեն բրոնզագույն մեծատառերով մակագրված «ԵՐԵՎԱՆ» պատվանդանին կանգնած, գլուխը հետ շրջած, իշխանության խորհրդանիշ գավազանը բռնած առյուծն է: Նրա գլխավերևում թագն է, մեջտեղից բարձրացող կենաց ծառի խորհրդանիշ վարսանդով: Առյուծի կրծքին, հավերժության նշանի վրա Արարատ լեռան պատկերն է: Ողջ պատկերը երիզված է ուղղանկյունաձև վահանակով: Գործածված են բրոնզագույն և կապույտ գույները:

Երևան քաղաքի դրոշն ունի հետևյալ նկարագիրը.

Դրոշի ուղղանկյուն խաղապատկերն ընտրված է սպիտակ՝ որպես մաքրության, պարզության, անաղարտության միացյալ խորհրդանիշ: Կենտրոնում Երևանի զինանշանն է՝ շրջապատված 12 կարմիր եռանկյունիներով, որոնք խորհրդանշում են Հայաստանի 12 մայրաքաղաքները: Զինանշանի երանգը ծիրանագույն և բրոնզագույն է՝ կապույտով երիզված: Ազգային դրոշի գույները համահեղինակները օգտագործել են՝ ընդգծելու դրոշի մայրաքաղաքային նշանակությունը:

Երևան քաղաքի զինանշանի և դրոշի գույնի փոփոխությունը արտահայտում է քաղաքի ձգտումը դեպի ժամանակակից և մինիմալիստական ինքնություն՝ միևնույն ժամանակ հավատարիմ մնալով ազգային խորհրդանիշներին: Ոսկին և ոսկեգույնը համաշխարհային խորհրդաբանության մեջ խորհրդանշում է արժանապատվություն, գերազանցություն և հեղինակություն, ինչը համապատասխանում է Հայաստանի մայրաքաղաքի կարգավիճակին: Ոսկեգույնը ստատիկ և հավերժական արժեքի գույն է: Այն հաճախ կիրառվում է խորհրդանիշներում (մայրաքաղաքներ, եկեղեցական սիմվոլիկա և այլն): Երևանի զինանշանի և դրոշի ոսկեգույնին անցումը կարող է ընդգծել քաղաքի պատմական արժեքը և մշակութային ժառանգությունը: Որպես շարունակականության և հավերժության գույն այն նաև արտահայտում է քաղաքի հազարամյակների պատմությունն ու շարունակականությունը՝ ընդգծելով Երևանի հնագույն ծագումը:

Միևնույն ժամանակ, միագույն ոսկեգույն լուծումը ավելի տեսանելի և արդյունավետ է թվային հարթակներում. պարզ գունային ձևավորումը հեշտությամբ ճանաչելի է կայքերում, սոցիալական ցանցերում և փոքր չափերի պատկերակներում: Բացի այդ, ոսկեգույնը հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի նոր բրենդավորման

հիմնական գույներից մեկը, ինչը ապահովում է քաղաքային խորհրդանիշների միասնական և ժամանակակից տեսք:

Նախագծում ներկայացված են նաև դիզայնում և վեբ մշակման մեջ օգտագործվող գունային ալիքներին համապատասխան կոդերը՝ կիրառության ժամանակ դրոշի և զինանշանի մեջ օգտագործվող ոսկեգույնը և սպիտակը առավել հստակ և նույնական դարձնելու նպատակով: HEX կոդը (վեցանիշ տասնվեցական գունային կոդ) դիզայնում և վեբ մշակման մեջ (HTML/CSS) օգտագործվող ալֆա-թվային տող է, որը սովորաբար սկսվում է «#» նշանով: Այն RGB (կարմիր, կանաչ, կապույտ) արժեքների սեղմ ներկայացումն է տասնվեցական (base-16) համակարգում, որտեղ յուրաքանչյուր երկու նիշը ներկայացնում է մեկ գունային ալիք՝ 00-ից մինչև FF միջակայքում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ